

1.2.3. Ձկնորսություն, ձկնաբուծություն

Հանրապետությունում 2008թ. հունվար-փետրվարին, համաձայն ձկնորսությամբ և ձկնաբուծությամբ զբաղվող առևտրային կազմակերպությունների ներկայացրած պետական վիճակագրական հաշվետվությունների տվյալների, իրականացվել է 304.7 մլն. դրամի ձկան որս, որը 2007թ. համապատասխան ժամանակաշրջանի ցուցանիշի մակարդակը զիջել է 20.2 %-ով (համադրելի գներով):

Ձկնորսության և ձկնաբուծության ծավալները հանրապետությունում¹

	2008թ. հունվար- փետրվար, տոննա	2008թ. հունվար- փետրվար, հազ. դրամ	2008թ. հունվար- փետրվարը 2007թ. հունվար- փետրվարի նկատմամբ, %	2008թ. փետրվարը հունվարի նկատմամբ, %
Կատարվել է որս ձկնորսության, ձկնաբուծության ոլորտում, ընդամենը	153.5	304697.5	79.8	215.8
<i>որից՝</i> իրացվել է	153.5	304697.5	79.8	215.8

¹ Առանց անհատ ձեռնարկատերերի և տնային տնտեսությունների (ոչ ֆորմալ) գործունեության գնահատման: